Տեղեկանք

փոփոխվող հոդվածների վերաբերյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ»

ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 18-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել ~~հետևյալ բովանդակությամբ~~ նոր՝ 41.11-րդ, 41.12-րդ, 41.13-րդ~~, 41.14-րդ և 41.15-րդ~~ և 41.14-րդ կետերով~~.~~՝ հետևյալ բովանդակությամբ.

«41.11) համայնքի ղեկավարի առաջարկությամբ, օրենքով սահմանված կարգով և լիազորված մարմնի հետ նախապես համաձայնեցնելով, որոշում է կայացնում համայնքի վարչական սահմաններում գտնվող տեղական նշանակության բնության հատուկ պահպանվող տարածք ստեղծելու վերաբերյալ~~.»~~,

~~«~~41.12) համայնքի ղեկավարի առաջարկությամբ սահմանում է տեղական նշանակության բնության հատուկ պահպանվող տարածք~~ի~~ում գանձվող թույլատրելի գործունեության և սպասարկման վճարների ~~չափը~~տեսակները և դրույքաչափերը~~.»~~,

~~«~~41.13) հաստատում է տեղական նշանակության բնության հատուկ պահպանվող տարածքի զարգացման (կառավարման) պլանը և կանոնադրությունը~~.»~~,

~~«~~41.14) համայնքի ղեկավարի առաջարկությամբ ~~ապահովում է~~որոշում է կայացնում տեղական նշանակության բնության հատուկ պահպանվող տարածք~~ների~~ի մոնիթորինգի կազմակերպ~~ումը~~ման ապահովման վերաբերյալ,~~.~~»:

Հոդված 2. Օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «հողամասերը» բառից հետո լրացնել «, բացառությամբ բնության հատուկ պահպանվող տարածքների հողամասերից,» բառերը:

Հոդված 3. Օրենքի 51-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) կազմակերպում է համայնքի սեփականություն հանդիսացող հողերի ~~և դրանց վրա գտնվող~~, տեղական նշանակության բնության հատուկ պահպանվող տարածքների և համայնքային անտառների պահպանությունը՝ օրենքով սահմանված կարգով,»,

2) 1-ին մասը լրացնել նոր՝ 4-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«4) օրենքով սահմանված դեպքում՝ լիազորված մարմնի հետ կնքված կառավարման պայմանագրի և տվյալ բնության հուշարձանի անձնագրի հիման վրա իրականացնում է բնության հուշարձանի կառավար~~ումը~~ման, պահպանության և օգտագործման գործառույթները:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: